

րիւտոնէական յայտնութիւններէն եւ պաւստանական հանգանակներէն :

Մենդելսոն իրր աշխարհաքաղաքացի, առաջին հարուածը տուաւ հրէական ազգ զաղափարին : Հրէայ երիտասարդներ սկսան կարգաւ գերմաներէնի թարգմանուած Աստուածաշունչը, եւ անոր շնորհիւ է որ եւրոպէական ազաւաղեալ բարրաւն հետզհետէ տեղի տուաւ մաքուր գերմաներէնին :

Ինչպէս պատահած էր Մայմոնիդի ժամանակ, Մենդելսոնի մահէն վերջն ալ անոր կաւսակիցները չափազանցութեան հասցուցին ազատախոհութիւնը եւ Հանրիէթ Հէրց նշանաւոր հրէուհի Բերլինի տան սրահներուն մէջ սկսան բացարձակապէս ծաղրել՝ ինչ որ հրէական էր եւ կը յիշեցնէր Թորան կամ Թալմուտը :

Հրէուհիներն արդէն միշտ նուազ ջերմեւանդ եղած են քան աշրերը, որովհետեւ յուզայականութեան համար կինը գրեթէ չի հաշուուիր. անոր մուտքն արդիւրեւ չէր Սինահոկին մէջ, բայց սովորութիւն էր որ չյաճախէ աշնակ. կնոջ ազօթքը հազիւ կը լսուի Եհովային եւ տաճարանեայ պատուիրանքին մէջ կինը կը յիշուի սովորական ինչքերու կարգին. «Մի՛ նախանձիր գրացիիդ տանը, կնոջը, աղախինին, եղին կամ իշուն» :

Հրէաներն իրենց աղջիկները գիւրաւ կը վատահին կաթոլիկ մայրապետներուն, որովհետեւ անոնց կրօնական զգացումները հաշուի չեն առնուիր :

Հանրիէթ Հէրց մեծցած էր աշտեսակ միջավայրի մէջ եւ ձերբազատուած հրէուհի տիպարն էր : Իր բարեկամները զինքը կը կոչէին ողբերգական Մուսան, թէեւ անոր երեսոյթն էր միայն ողբերգական. սրտով ան չատ բարի էր եւ զօրաւոր անհատականութեան տէր : Բերլինի ամբողջ բարձր դասակարգի ժամադրաւայրն էր իր տունը : Աշնակ էր որ առաջին անգամ, Փրանսական յեղափոխութենէն եւ հրէական ազատագրութենէն առաջ՝ հրէայ եւ քրիստոնեայ հաւասար առ հաւասար կը հանդիպէին իրարու :

Վերջ ի վերջոյ Հանրիէթ մկրտուեցաւ Մենդելսոնի աղջիկներուն եւ մեծ տղային հետ, զդուելով իր կրօնակիցներու մոլեռանդ

աւանդապաշտութենէն : Եւ սակայն հրէութիւնն արդէն այդ ծէսերուն եւ աւանդութեանց կիրառման մէջ էր : Հրաժարիլ անոնցմէ կը նշանակէր՝ հրաժարիլ հրէութենէ. ազգութեան դադարաւոր ծագած չէր տակաւին :

Մեր մէջ ալ հայ մը եթէ մահմետականութիւն ընդունի, ժողովուրդը զայն իրաւամբ թուրք կը նկատէ, թէեւ իսկապէս ան միայն կրօնքն է որ փոխած է : Հիմա է որ ազգութիւն եւ կրօնք բաժանուած են իրարմէ եւ քովէ քով կ'ապրին ալիւալլ կրօնքներու, բայց միեւնոյն ազգութեան պատկանող ժողովուրդներ :

ՅՐԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

ԺԸ դարու վերջերուն արդէն կէքքօն վրտանդի տակ էր Արեւմուտքի մէջ, բայց այս անգամ ոչ թէ քրիստոնեաներուն, այլ աւելի զօրաւոր թշնամիի մը կողմէ : Ազատութեան ոգին սկսած էր տարածուիլ, եւ Փրանսական յեղափոխութիւնը կը հռչակէր ամէն քաղաքացիներու հաւասարութիւնը :

Փրանսական Յեղափոխութենէն երեք տարի առաջ Միրարօ Բերլին էր եւ կը յաճախէր Հանրիէթ Հէրցի տունը, ուր կը հանդիպէր հրէաներու, որոնք ոչինչով կը տարբերէին գերմանացիներէն : Փարիզ վերադարձին գիրք մը հրատարակեց, ուր կ'ըսէր, թէ եթէ փափաքել է որ հրէաներն օգտակար քաղաքացիներ ըլլան, պէտք է անոնց առջեւ բանալ բոլոր դռները եւ ջնջել գանոնք ստորնացնող բոլոր օրէնքներն ու հրամանագրերը : Քիչ վերջը Սահմանադիր Ժողովին մէջ Միրարօ ջատագովն եղաւ հրէական ազատագրութեան եւ վերջ ի վերջոյ քուէարկել տուաւ ջնջումն այն բոլոր օրէնքներուն, որոնք ռեւէ խտիր կը դնէին հրէայի ու քրիստոնեայի միջեւ :

Փրանսարեակ 50,000 հրէաներուն համար կենսական կարեւորութիւն ունէր այս քուէն, թէեւ Եւրոպայի մէջ ապրող իրր 10 միլիոն հրէական զաղութիւն հետ բաղդատմամբ նշանակութիւն չունէր Փրանսայի հրէական համայնքը :

Նափոլէոն թէեւ անձամբ չատ համակիր էր հրէաներուն, բայց իրր Փրանսացիներու կայսր ամենուրեք սիրով կ'ընդունուէր հրէա-